

# ԹՎԱՆՉԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Փոքրիկ Նարեն խորանարդիկների միջոցով սովորում է թվանշանները և թվերը: Նարեն ունի երեք խորանարդիկ, որոնց նիստերի վրա թվանշաններ են գրված: Խորանարդիկներն իրար կողք դնելով նա կազմում է տարբեր եռանիշ թվեր: Նարեն եռանիշ թիվ է կազմել: Բայց նրա մայրը Նարենին այսպիսի խնդիր է առաջադրել: Նա ինչ-որ հերթականությամբ գրել է 1, 2, 3 թվանշանները: Նարեն պետք է վերադասավորի իր եռանիշ թվի թվանշանները ըստ այդ թվանշանների: Նարեն շատ է փոքրիկ և դժվարանում է այդ խնդրում: Գրեք ծրագիր, որ նրա փոխարեն լուծում է խնդիրը:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է մեկ եռանիշ թիվ: Երկրորդ տողում տրված է 1, 2, 3 թվանշանների որևէ դասավորություն: Թվանշաններն իրարից աջատված են մեկական բացատով:

## Ելքային տվյալներ

Արտածել վերադասավորված թվանշաններով եռանիշ թիվը: Երաշխավորվում է, որ եռանիշ թիվը զրո թվանշան չի պարունակում:

## Օրինակներ

**Մուտք.**

782

3 1 2

**Ելք.**

278

**Մուտք.**

567

1 2 3

**Ելք.**

567